

լական դարգացման սովորական պլաններին: Այդ նպատակային և կոմպլեքսային ծրագրերը նախատեսում է տնտեսական, սոցիալական, կազմակերպական և գիտատեխնիկական հարցերի լուծում: Երազիրը ոչ թե պարզապես խնդիրներ է առաջադրում, այլև միաժամանակ նշում է դեռանց լուծման ուղիներն ու մեթոդները:

Ժողովում կոնկրետ առաջարկություններ արվեցին գիտական հետազոտությունների ինտենսիվացման, գյուղատնտեսության բոլոր բնագա-

վածներում դրանց արդյունքների արմատավորման արագացման վերաբերյալ:

Ընդհանուր ժողովն ընդունեց որոշում, որտեղ իրենց արտացոլումը գտան պարենային ծրագրի իրականացման ուղղությամբ հանրապետության գիտական հիմնարկների առջև կանգնած կոնկրետ խնդիրները: Ժողովի աշխատանքին մասնակցում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Բ. Ղալումյանը, կուսակցական, սովետական ղեկավար այլ աշխատողներ:

Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՐ

1982 թ. սեպտեմբերի 21—25-ը նրկանում տեղի ունեցավ միջազգային հայերենագիտական գիտաժողով, որին մասնակցեցին Սովետական Միության տարբեր քաղաքներից և արտասահմանյան 10 երկրներից հրավիրված հայագետներ: Գիտաժողովն աչքի ընկավ մասնակիցների լայն ներկայացուցչությամբ և հարուստ ու բազմակողմանի ծրագրով: Լիագումար (պլենար) և մասնաճյուղային նիստերում լսվեցին 89 զեկուցումներ և հաղորդումներ, որոնք նվիրված էին հայերենագիտության ամենաբազմազան բնագավառների և արտացոլում էին հայոց լեզվի ուսումնասիրության արդի մակարդակը: Գիտաժողովի աշխատանքներն ընթացան երեք մասնաճյուղերով՝ հայերենի համեմատական քերականության, հայոց լեզվի սյուսմության և ժամանակակից հայոց լեզվի: Պետք է, սակայն, նշել, որ այս բաժանումը որոշ չափով պայմանական էր, քանի որ յուրաքանչյուր մասնաճյուղի թեմատիկ ընդգրկումը շատ ավելի լայն էր:

Հայերենի համեմատական քերականության մասնաճյուղում կարդացված զեկուցումները նվիրված էին հայոց լեզվի կառուցվածքի բոլոր մակարդակների համեմատական քննությանը՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, իմաստաբանության: Համեմատաբար լայնորեն քննարկվեցին հայերենի համեմատական հնչյունաբանության և ձևաբանության հարցերը, եթե մասնավոր ներկատի առնենք, որ լիագումար նիստերում կարդացված զեկուցումների մեծ մասը (Գ. Զահուկյան, Ջ. Գրեպին, Թ. Գամկրելիձե, Ջ. Բոլոնզի, Վ. Վինտեր, Է. Հեմփ, Կ. Հ. Շմիդտ) նույնպես վերաբերում էր նշված բնագավառներին: Համեմատական լեզվաբանության և հատկապես հնդեվրոպաբանության վերջին տասնամյակները լուրջ նվաճումները հնարավորություն տվեցին ոչ միայն նորովի մեկնաբանել ու

գնահատել հայերենի ընձեռած նյութը, այլև դրա հիման վրա արժեքավոր ճշգրտումներ մտցնել հ.-ե. նախալեզվի վերականգնվող կազմակերպի որոշ կողմերի մեջ: Այդ տեսակետից ուշագրավ էր Թ. Գամկրելիձի (Թբիլիսի) «Էնդեվրոպական եկատկայինների տեսություն»-ը և գրաբարի բաղաձայնական համակարգը՝ զեկուցումը, որտեղ հեղինակը հ.-ե. պալթականների դասական տեսության տիպաբանական վերամեկնաբանման հիման վրա առաջ քաշեց հին հայերենի պալթական բաղաձայնների համակարգի բացառիկ հնատիպության դրույթը, գտնելով, որ պալթականների հ.-ե. նախական համակարգը հայերենում նշանակալից փոխակերպումներ չի կրել: Օ. Ս. Շիրոկովը (Մոսկվա) նույնպես հաստատում է բաղաձայնական շարքերի հայկական համակարգի հնատիպությունը: Համահնդեվրոպական և հայկական բաղաձայնական համակարգերի հարաբերակցության քննության ժամանակ կիրառելով տիպաբանական տվյալներ, նա հայերենի ընձեռած նյութի հիման վրա վերականգնում է հ.-ե. երկրաբաղաձայն վանկաձևությունների վեց տիպ, որոնց տարբեր տոների առանձնահատկություններից կարելի է պարզել հնչյունական անցումների տիպերը:

Դասական հայերենի շնչեղ խուլ բաղաձայների ծագման էր նվիրված Ջ. Գրեպինի (ԱՄՆ) զեկուցումը: Քննելով շնչեղ խուլ բաղաձայններ պարունակող հայերեն արմատների մի խումբ, հեղինակը գտնում է, որ հայերենի նյութը սերտ մերձավորություն ունի սանսկրիտի և հունարենի տվյալների հետ և հնարավորություն է տալիս հայերենի շնչեղ խուլների ծագման խընդիրը լուծել կոկորդայինների տեսության միջոցով:

Հայերենի համեմատական հնչյունաբանության և ստուգաբանության հարցերին նվիրված զեկուցումներից ուշագրավ էր լիագումար նիս-

տում կարողացված՝ Կ. Ջաշուկյանի «Հայերենի ստուգարանական կրկնակների մասին» զեկուցումը, նշելով, որ հանրային բազմաթիվական համակարգի փոփոխությունների բոլոր օղակները, այդ թվում այսպես կոչված բազմաթիվական տեղադրված բնութագրվում են ստուգարանական կրկնակների և թվացյալ բացառությունների առկայությամբ, և հաստատելով բազմաթիվական հերթագայությունների տիպեր՝ իրենց ստուգարանական կրկնակներով, հեղինակը մատնանշում է զրանց աղբյուրները՝ բարբառներ, փոխառություններ և ենթաշերտային սպիտակություն, հ.՝. լեզվի տարածքային և հասարակական-ճանաչական տարբերակները։ Նշվում է նաև համեմատության ժամանակ ներքին վերահասկումն առկայություն հաշվառման կարևորությունը այն դեպքերում, երբ ստուգարանական կրկնակները փաստերի ճշգրտման հնարավորություն են ընձեռում։ Ստուգարանությունների ճշգրտման պահանջն էր առաջադրվում նաև Ջ. Բոլոնյայի (Իտալիա) «Հայերենի հնչյունաբանության և ստուգարանության խնդիրները» զեկուցումն մեջ, որ հեղինակը նպատակ էր դրել ստուգարանությունների վերլուծության հիման վրա ճշգրտելու հայերենի հնչյունական որոշ առանձնահատկություններ, որոնք մինչև այժմ սահմանված չէին հայերենի համեմատական քերականությունների մեջ։

Քննարկվեցին նաև հին հայերենի հնչյունական և շեշտադրական համակարգի ավելի մոտակայի հարցերը Մ. Աղաբեկյանի զեկուցումը նվիրված էր նախապատմական շրջանի հայերենում շեշտի առանձնահատկություններին և նրա հետ կապված հնչյունական փոփոխություններին։ Բ. Օլսենը (Ռանիա) փաստական հարուստ նյութի հիման վրա ներկայացրեց միջնադարյան Մ-ի կրած փոփոխությունները հայերենում։

Վերջին տասնամյակների հայ համեմատաբանության կարևոր առանձնահատկություններին մեկը պետք է համարել հայերենի բարբառների նյութի ընդգրկումը։ Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն էին ներկայացնում Ա. Ա. Խաչատրյանի, Ա. Ն. Հանեյանի, Ա. Ե. Խաչատրյանի զեկուցումները։ Վատարելով հայերենի 7 բարբառային միավորների շնչեղ ձայնեղ հնչյունների օսցիլոգրաֆիկ և լսողական վերլուծությունը, Ա. Ա. Խաչատրյանը հանդուժում է այն եզրակացության, որ հայերենի շնչեղ ձայնադրված հիման պահը գրեթե միշտ խուլ է, իսկ պայթյունը կարող է լինել ինչպես խուլ, այնպես էլ ձայնեղ։ Այդ հնչյունները լրացությունը սովորաբար ընկալվում են որպես քուլ կամ կիսով չափ ձայնեղ, իսկ նրանց մեջ

շունչի առկայությունը բացահայտվում է հաջորդող ձայնավորի պատկերի մեջ։ Ա. Հանեյանի զեկուցումը նվիրված էր հայ բարբառների մեջ ձայնեղ հազագների տարբեր տեսակներին և գրաբարի և ձայնորդի հետ ունեցած նրանց փոխհարաբերությունը։ Հեղինակը ենթադրում է, որ հին հայերենի և ձայնորդը գոտ քմային հնչյուն չէր, այլ առկա զն որոշ տարածքներում կարող էր կոկորդային-հազագային երանգ ունենալ՝ հակադրվելով հին ձայնադրության հատկանիշով։ Ա. Ե. Խաչատրյանը «Ձայնադրի հին երևույթներ հայ բարբառներում» զեկուցման մեջ առաջարկում էր որոշակի չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի առանձնացնել հ.՝. բարբառային հնարանությունները հայ բարբառների հետագա ինքնուրույն զարգացման ընթացքում առաջացած երևույթներից։

Հայերենի հ.՝. բառաշերտի վիճակագրական ուսումնասիրության արդյունքները ներկայացվեցին Վ. Քոսյանի «Հնդեվրոպական արմատների դերը հայերենում» զեկուցման մեջ։ Հեղինակը քանական տվյալներով ցուցադրեց հ.՝. ծագում ունեցող արմատների մեծ կենսականությունը հայերենի զբաղվող շրջանի բոլոր արտահայտություններում (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար)։ Այդ արմատների կենսականության նախադրյալներն են նրանց բազմիմաստությունն ու բառակազմական ակտիվությունը, որոնց շնորհիվ այդ արմատներով կազմվել են մի քանի տասնյակ հազար բառեր։

Հայ համեմատաբանության ուղադրության կենտրոնում է եղել հայերենի հ.՝. բառաշերտի առանձին իմաստային խմբերի ուսումնասիրությունը՝ տարածքային կապերի հաշվառմամբ։ Այս բնագավառին էր վերաբերում Հ. Ասմանդուլյանի «Հայերենի ազգակցություն ցույց տրվող բառերի պատմահամեմատական ուսումնասիրության մի քանի հարցեր» զեկուցումը, որտեղ հեղինակը լուսարանում է հին հայերի ընտանիքի և տոհմային կազմակերպման առանձնահատկությունների պատմական զարգացումը, ինչպես նաև հ.՝. այլ լեզուների հետ հայերենի ունեցած տարածքային հարաբերությունները։ Տարածքային լեզվաբանության տեսանկյունից Ա. Յ. Ռուսուկովը (Լենինգրադ) ներկայացրեց հայերենի ու ալթայերենի փոխհարաբերությունը, գտնելով, որ հայերենի ու ալթայերենի ընդհանրությունները չեն վկայում տարածքային սերտ մերձավորության մասին և ավելի շուտ խոսում են հօգուտ տիպաբանորեն նման զարգացման։ Գիտաժողովում լավեցին նաև զեկուցումներ, որտեղ առաջարկվում էին առանձնաբառերի նոր ստուգարանություններ՝ Ալմենիա

(Լ. Գ. Գերցենբերգ) և Բաբկան (Ա. Գ. Փերի-խանյան):

Առանձնապես մեծ էր հետաքրքրությունը հայերենի համեմատական ձևաբանության նկատմամբ. ներկայացվեցին հայերենի ձևաբանական կառուցվածքի զրեթե բոլոր ենթահամակարգերին նվիրված ղեկուցումներ: Է. Հեմփի (ԱՄՆ) ղեկուցումը լուսաբանում էր հայերենի հոլովման համակարգի հնատիպ երևույթները, Կ. Հ. Օմիդյոն մանրամասն վերլուծեց հին հայերենի բայի հ.-բ. հիմքերը՝ նկատի ունենալով հ.-բ. լեզվի հնդկա-հունա-փոյոգա-հայկական վերականգնման կաղապարը և հատուկ ուշադրություն դարձնելով բայի դիմալոր՝ ձևերին: Վ. Վինտերը (ԳՖՀ) ներկայացրեց հայերենի թվականների համակարգը, բացահայտելով նրա հնատիպ գծերը և այն հակասությունները, որոնք հիմք են տալիս ենթադրելու հայերենի ծագումը նախահայերենի տարբեր բարբառներին: Ֆ. Մավեի (Բելգիա) ղեկուցումը նվիրված էր այն իմաստով ղերանվանական մասնիկների (կասեր, շաղկապներ, մասնիկներ, հոլովական վերջավորություններ) գործառական և իմաստային զարգացման հետազոտությանը հ.-բ. լեզվից հայերենին անցման ընթացքում, որի հիման վրա հնդինական փորձում է որոշել հայերենի բարբառային դիրքը: Ֆ. Կորտլանդի (Հոլանդիա) ղեկուցման մեջ, որը նվիրված էր նախահայերենի հոլովական վերջավորությունների հնդեվրոպական նախատիպերի բացահայտմանը, առաջ է բաշխում այն միտքը, որ հայերենը որոշ ղեպերում կարող է միջնորդ օղակ հանդիսանալ հ.-բ. այլ լեզուների հոլովական վերջավորությունների վերականգնման ընթացքում: Է. Բոմանյանը (Մոսկվա) հանդես եկավ «Հայերենում հնդեվրոպական նախաձևի վերականգնումն մի քանի առանձնահատկություններ» ղեկուցումով, որտեղ հայերենի հ.-բ. ծագման անունների կառուցվածքի քննության հիման վրա ներկայացրեց ուշ հ.-բ. շրջանի բաղադրյալ բառերի փոխակերպման ընթացքը, որի հետևանքով հայերենում առաջացել են պարզ արմատական բառեր: Լ. Սարաջևայի (Երևան) ղեկուցումը վերաբերում էր հայ-սլավոնա-թուրքական բարբառային մի նորաբանության՝ «[ածանցով ղերբայի առաջացման և հետագա գործառության քննությանը: Ժ. Վալտենբերգը (Հոլանդիա) հին հայերենի գլխի բառի հոլովման հարացույցի հիման վրա փորձեց ներկայացնել հայերենում հ.-բ. ձևաբանական կաղապարի կառուցվածքային վերականգնման առանձնահատկությունները: Համեմատական շարահյուսության հարցերին նվիրված էր ընդամենը մեկ ղեկուցում (Վ. Շմալստիգ, ԱՄՆ), որ-

տեղ հայերենի և լիտվերենի փաստերի համեմատական քննության հիման վրա հնդինական սահմանում է համարվեց շարահյուսական կառույցներ, որոնք հետագայում ևս ունեցել են նույնատիպ զարգացում: Համեմատական իմաստաբանության հարցերը քննարկվեցին Դ. Զորթ (ԳՖՀ) ղեկուցման մեջ: Հենվելով լեզվալինգվադրական մեթոդի վրա՝ ղեկուցողը տվեց հին հայերենի բառիմաստների փոփոխության պատկերը՝ աշխարհաբարին անցման շրջանում:

Հայ հոգևոր մշակութային պատմությանը՝ համեմատական ղեցաբանության հայեցակետից, նվիրված էր Ռ. Յակոբսոնի (ԱՄՆ) ղեկուցումը, որը ներկայացրեց ղեկականի այլին՝ Կ. Պոմորսկա-Յակոբսոնի: Զեկուցման մեջ բացահայտվում էին հայոց Վահագնի և սլավոնական Սվարոգ աստծու (իր տարբերակներով) ընդհանուր հնդիրանական ծագումը և լուսաբանվում էին հ.-բ. ժողովուրդների հնագույն էթնիկական և մշակութային շփումները (ղեկուցումը տպագրվում է «Պատմա-բանասիրական հանդեսի» ներկա համարում): Վահագնի երգի մեջ արտացոլված հավատալիքների և աշխարհաբանության հայ-խեհա-սլավոնական առասպելաբանատեղծական ընդհանրությունների քննության էր նվիրված Վ. Վ. Իվանովի (Մոսկվա) ղեկուցումը: Զ. Ռասսելի (ԱՄՆ) ղեկուցման մեջ, որը նվիրված էր հին հայերի կրոնական պատկերացումների և նախաքրիստոնեական հայկական պաշտամունքների համակարգի վերականգնմանը, առաջարկվում է այն վարկածը, որի համաձայն հին հայկական կրոնը դադարապաշտական մի խնդիրն էր դաստիարակում էր և սերտորեն կապված էր պարթևական շրջանի սկիզբի կրոնի հետ:

Հայոց լեզվի պատմության կարևորագույն պրոբլեմներին է լեզվի պատմության շրջանաբանման խնդիրը, մասնավորապես գրաբարի զարգացման սկզբնական շրջանի պատմական ընթացքի լուսաբանումը, որին տարբեր հայեցակետերից իրենց ղեկուցումներում անդրադարձան Վ. Առաքելյանը, Ա. Մուրադյանը և Լ. Հովսեփյանը: Խոսելով Հայ լեզվաբանության պատմության մեջ դասական գրաբարի գաղափարի առաջացման պատմական նախադրյալների մասին և քննելով դասական և հոդասական շրջանների տարբերակման համար նախկինում բերվող հատկանիշները, Վ. Առաքելյանը V դարի լեզվական աղբյուրների մանրամասն քննության մեջ հանգում է այն եզրակացության, որ տվյալ հատկանիշները նշված շրջանների տարբերակման համար բավարար չեն: Լ. Հովսեփյանի ղեկուցման մեջ արժանի էր այն

միտքը, որ դասական գրարարի հասկացությունները առաջ է քաշվել հիմնականում հակադրվելու համար հունարան դպրոցի լեզվին, մինչդեռ այստեղ ավելի շուտ խոսք կարող է լինել աշխարհի ժամանակագրական հաջորդականության, որոնք գրեթե միաժամանակ գոյություն ունեցած երկու դպրոցի, գրական լեզվի մշակման երկու ուղղության մասին՝ հունարան և այսպես կոչված հայկաբան։ Հոգուտ այս վարկածի է խոսում նաև Ա. Մուրադյանի զեկուցման մեջ պատմական և լեզվական աշխարհի փաստերով հիմնավորվող այն տեսակետը, որի համաձայն հունարան դպրոցի գործունեությունը սկսվել է շատ ավելի վաղ, քան մինչև այժմ ընդունված էր հայ բանասիրության մեջ։ Հունարան դպրոցի առաջին թարգմանությունները կատարվել են V դարի II քառորդում, դեռևս կրտսեր թարգմանիչները՝ Հունաստանում գրադարձություններին։

Ձևկուցումների մի ամբողջ շարք նվիրված էր գրավոր հուշարձանների լեզվաբանական և բանասիրական բնութագրի, այստեղ ամենից առաջ պետք է հիշատակել Ռ. Թոմսոնի (ԱՄՆ) «Գիտնություն Արիստոտելի հայերեն թարգմանության տեքստը» և Մ. Վան էսթրոկի (Ռեյդիա) «Մշո Տոնական ժողովածուի կառուցվածքը» զեկուցումները, որոնցում հեղինակները լեզվական և բնագրադարձական հետազոտություններ պարզում էին նշված աղբյուրների ստեղծման ժամանակաշրջանի, կառուցվածքի, նախորդականների և լեզվական առանձնահատկությունների հետ կապված հարցերը Անցյալի բուստարանադրական հուշարձանների բնութագրին էին նվիրված Ա. Տերյանի (ԱՄՆ) «Փիլիսոփայական տերմինների ու հասկացությունների միջնադարյան մի բառարան», Բ. Չուրազյանի (Երևան) «Եղիա Մուշեղյանի թուրքերեն-հայերեն անտալ բառարանը» և Կ. Յուզբաշյանի (Լենինգրադ) «Ռուստունի լեզվի բառարան» զեկուցումները։ Սրանցից առաջինում զեկուցողը 52 բառաձևով ավարտակալ մի փոքրիկ բառացանկի բնութագրին հիման վրա պարզաբանեց հայերեն փիլիսոփայական տերմինները՝ ծայրահեղ և նրանց սահմանումների աղբյուրների հարցերը և նշեց, որ մի շարք տերմիններ, չունենալով հունարեն դուգահեռներ, ստեղծվել են ինքնուրույնաբար և հաստատապես տեղական ծագում ունեն։ Բ. Չուրազյանը և Կ. Յուզբաշյանը իրենց զեկուցումներով գիտական շրջանառության մեջ ներմուծեցին մինչև այժմ բնութագրված հայտնի բառարանագրական հուշարձաններ, որոնք հետագա լուրջ բանասիրական և լեզվաբանական բնութագրի կարիք ունեն։ Հայոց լեզվի անցած շրջանների բառապաշարի ուսումնա-

սիրության առումով վերջ նշված զեկուցումներին էին հարում նաև Ա. Սանջյանի (ԱՄՆ) «Օտար բառեր հայերեն ձևագրերի հիշատակարանների մեջ» և Վ. Համբարձումյանի -XVIII—XIX դդ. գրաբարի ճարտասանական տերմինաբանությունը» զեկուցումները։ Վերջինիս մեջ շեշտվում է այն միտքը, որ գրաբարի բառապաշարը շարունակում էր մշակվել ու զարգանալ նաև նշված ժամանակաշրջանում՝ հարստանալով մասնագիտական տերմինների արժեք ունեցող նորակազմություններով։ Հայերենի ուղղագրության պատմությանը, ուղղագրության տարբեր համակարգերի առաջացման պատճառներին և միասնական ուղղագրություն ունենալու ուղիների որոնման էր նվիրված Ս. Դյուլոյի դպրոցի զեկուցումը։ Հայ լեզվաբանական մեթոդի պատմության անդրադարձան Հ. Միրզոյանը և Ա. Արաբաբյանը, որոնցից առաջինը բացահայտեց Հովհաննես Հովսի աշխարհայացքը հակասական կողմերը և առաջ քաշեց նրա վաստակի վերադնադարձման հարցը։ Երկրորդ զեկուցման մեջ լուսարանվեցին Ա. Այտեյանի հայացքները հայոց լեզվի պատմական զարգացման, գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության վերաբերյալ։ Համեմատաբար օակավաթիվ էին հայերենի պատմական քերականությունը, գրաբարի քերականական կառուցվածքին նվիրված հաղորդումները։ Դրանք էին՝ Յ. Ֆեյդի (Ֆրանսիա)՝ լիազումար նիստում կարդացված զեկուցումը «Հարաբերական նախադասությունը հայերեն գրաբար լեզվի մեջ», ինչպես նաև Ս. Անթոնյանի «Հայերենի կրավորականի դրսևորումների պատմական զարգացումը», Կ. Կոքսի (Կանադա) «Ապառնի դերբայի կիրառությունը Հնդգամայանի հայերեն թարգմանության մեջ» զեկուցումները։ Դրան հակառակ, լայնորեն բնագրակցին պատմական տարրեր ժամանակաշրջաններում հայերենի և այլ լեզուների շփումների և փոխհարաբերությունների հարցերը։ Ուշադրության առնվեցին ինչպես ենթաշերտի բնույթ կրող ազդեցությունները («Հնդկություն պական հայերենում հին կովկասյան ենթաշերտի նստվածքի հարցի շուրջը»—Ա. Չիրբորաբյան, Լ. Սանիկիձե, Թբիլիսի), հնագույն լեզվաթերական շփումների հետևանքով հայերենին առնված փոխառությունները՝ ըստ բառիմաստային տարրեր խմբերի և բառակազմական կաղապարների («Անկադական երկրագործական տերմինները հայերենում»—Ն. Մկրտչյան, թերանական անունների շերտերն ու տիպերը հայ պատմիչների երկերում»—Ռ. Շմիտ, ԳՖՀ, «Հայերենի բառական փոխառությունների մասին»—Լ. Հովհաննիսյան, «Թերանական փոխառությունները

դասական հայերենի անվանական բառաբարդ-ման ոլորտում»—Մ. Լեբուա, Բեղիա), այնպես էլ գրական-մշակութային ճանապարհով հայերենի բառապաշարի հարստացումը նոր բառերով ու պատճենումներով (սեռականների ազդեցությունը հայերենի վրա)»—Ռ. Բ. Ֆինացցի, Իտալիա): Ուշագրավ էր Ա. Պիտովիչի զեկուցումը՝ նվիրված հայ բարբառների նոր պարսկական փոխառությունների հնչյունաբանության առանձնահատկություններին, որոնց միջոցով հեղինակը փորձում է որոշել փոխառության անմիջական ազդեցությունը Ուրալկի հետաքրքրություն առաջացրեց այնպիսի քիչ ուսումնասիրված մի բնագավառ, ինչպիսին է հայերենի ազդեցությունը դրացի լեզուների վրա: Այս թեմային էին նվիրված Գ. Ա. Բադիրովի (Բաքու) «Հայկական բառապաշարային տարրերը ադրբեջանում», Ռ. Ն. Գորգոսյանի (Թբիլիսի) «Հայերենից վրացերենին անցած մի քանի փոխառությունների մասին», Վ. Լ. Ղուկասյանի (Բաքու) «Հայ-ուսմական լեզվական շփումների պատմությունից», Է. Սելյանի (Բուդապեշտ) «Հայկական տեղանունները բուլղարական Ռոդոպիում» զեկուցումները: Ս. Ն. Մուրավյովը հայկական և աղվանական այբուբենների համեմատության հիման վրա փորձեց պարզել հին ուսիրենի հնչյունային համակարգի առանձնահատկությունները: Հայերենի և այլ լեզուների փոխհարաբերությունները քննվեցին նաև Ղուգաղրական-տիպաբանական հետազոտությունների հայեցակետից: Մ. Ն. Բոգոլյուբովը (Լենինգրադ) անդրադարձավ գրաբարի երկկազմ նախադասության մեջ անցողական ռալի կատարյալի կառուցիչ տարրեր լեզուներում առկա տիպաբանական զուգահեռներին, Ա. Գ. Մարտիրոսովը (Թբիլիսի) կանգ առավ գրաբարի և հին վրացերենի որոշ դերբայական ձևերի, բառակազմական մասնիկների և ցուցական դերանունների տիպաբանական նմանության վրա: Մ. Մ. Սախոկիան (Թբիլիսի) շարահյուսական տիպաբանության խնդիրների տեսանկյունից փորձեց ներկայացնել հին հայերենի անվանական-ստացական և բայական-ստացական կառույցները:

Հայոց լեզվի պատմության մասնաճյուղում քննարկվեցին նաև հայ բարբառագիտության կարևորագույն խնդիրները: Զ. Մուրադյանը հանդես եկավ հայերենի բարբառագիտական աստիճանի կազմման սկզբունքներն ու աշխատանքի ընթացքը լուսաբանող հանգամանալից զեկուցումով, որտեղ ներկայացրեց անցած 5 տարում այդ ուղղությամբ ձեռք բերված արդյունքները: Հայագիտության համեմատաբար քիչ հետազոտված բնագավառի՝ պատմական բարբառագիտության խնդիրներն էին արծարծվում Մ. Մուրադ-

յանի զեկուցման մեջ, ուր հեղինակն առաջադրում էր միջին հայերենի բարբառային միավորների վերականգնման մեթոդներ ու եղանակներ:

Միջին հայերենի գրական նշանավոր հուշարձաններից մեկի՝ հայերենների տեքստի կառուցվածքի բնութագրման էր նվիրված Դ. Սիլվայակի (Երևան) «Քերականությունն ու տրամաբանությունը հայերեններում» զեկուցումը:

Ժամանակակից հայոց լեզվի մասնաճյուղում ներկայացված զեկուցումները նույնպես աչքի էին ընկնում թեմատիկ բազմազանությամբ: Նոր գրական հայերենի կազմավորման պատմությունը ներկայացրեց Ռ. Իշխանյանը, որը խոսեց նրա ծագման ժամանակաշրջանի, սկզբնական միասնական զարգացման միտումների, վաղ աշխարհաբարի տարածական տարբերակների և առաջին գրավոր հուշարձանների մասին: Գրական արևելահայերենի և նրա բարբառային հիմքի՝ Արարատյան բարբառի հնչյունական համակարգերի փոխհարաբերության հարցը լուսաբանվեց Մ. Ասատրյանի զեկուցման մեջ: Ծաղկեսյանը խոսեց արևելահայ գրական լեզվի գիտական տեղիմարանության ստեղծման գործում «Հյուսիսարևելյան» կատարած նշանակալից դերի մասին: Ն. Պառնասյանը, որ հանդես եկավ լիազուգուր նիստում, իր զեկուցման մեջ ներկայացրեց աշխարհաբարի քերականական կառուցվածքի զարգացման օրինաչափությունները՝ XIX դարի կեսերից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանում, կանգ առավ ձևաբանական և շարահյուսական համակարգերի նորմավորման ու միասնականացման միտումների լուսաբանման վրա: Ժամանակակից հայերենի սովորական շրջանի զարգացման առանձնահատկությունները հանրալեզվաբանական հայեցակետից ներկայացվեցին լիազուգուր նիստում կարդացված՝ Է. Աղայանի զեկուցման մեջ: Նշելով, որ սովետական կարգերի հաստատումից հետո հայոց լեզուն ստացավ պետական լեզվի կարգավիճակ և զարգացման ու մշակման աննախընթաց հնարավորություններ, Է. Աղայանն ընդգծեց, որ հայերենը իր բառապաշարի հարստությամբ, ոճական բազմազանությամբ և նորմավորված քերականական համակարգով այժմ ի վիճակի է լիովին բավարարելու հայ ժողովրդի պահանջները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Այս նույն բնագավառին էր վերաբերում նաև Զ. Զաքարյանի զեկուցումը, որտեղ ներկայացվում էր Երևանի բնակչության հասարակական կազմի և նրանց լեզվի փոխհարաբերությունը, հայերենի գործառական-ոճական տարբերակներն ըստ գործածության ոլորտների, երկլեզվության և ղուգախոսության պատ-

կերրու Արեւմտահայերէնի հանրալեզւաբանական քննութեան փորձ էր Լ. Զեքիյանի «Հայերեն լեզուի վերապրումի հարցը «Արեւմտեան» սփյուռքի մէջ» հետաքրքրական զեկուցումը, որտեղ պատմական, մշակութային ու հասարակական պայմաններին վերլուծութեան, ինչպէս նաեւ այլ ժողովուրդներին մէջ լեզվապահպանութեան վիճակի քննութեան հիման վրա հեղինակը փորձեց նշել այն պայմանները, որոնք հնարավորութիւն կը տան հայերէնին զուստնելու զոնկ առաջիկայ մի րանի սերունդներին կայանքում: Գիտաժողովին ներկայացուցիցին զեկուցումներ՝ նվիրւած արդի հայերէնի լեզվափոխակի հետազոտման մի այնպիսի կարեւոր բնագոյնի, ինչպիսին է արեւելահայ և արեւմտահայ զրական լեզուների զուգադրական ուսումնասիրությունը Պարզ զարձակ, որ ներկայումս աշխատանքներն քննարկում են աղբերկու տարբերակների լեզվական կառուցվածքի զրեթի բոլոր մակարդակների զուգադրման ուղղությամբ: Այսպէս, ն. Սարգսյանի զեկուցումը նվիրւած էր հնչույթային համակարգների քննութեանը՝ ինչպիսի հարադրուցային, աւելիս էլ շարակարգային կապերի, յուրաքանչյուր միավորի արժեքի և զործառական բեռնութեան հաշվառմամբ: Ս. Ղուկասյանի զեկուցման մէջ քննված էին արեւմտահայերէնի և տրեկահայերէնի մէջ հարցական նախադասութեան մեկ տիպի հնչերանգային յուրահատկութիւնները: Ա. Փլուրշչան անզրադարձակ անվանական րադադրակ ստորոգայտների կառուցվածքի առանձնահատկութիւններին մեր զրական լեզվի ներկու տարբերակներում: Այս մասնաւորում քննարկված զեկուցումների մեծ մասը, բնականաբար, վերաբերում էր ժամանակակից հայերէնի լեզվական կառուցվածքի զրեթի բոլոր մակարդակներին: Հնչույթաբանական հետազոտությունները հենվում էին հիմնականում փորձառական եղանակով ստացված տվյալների վրա: Հաստատում ալ ուղղությամբ տարվող աշխատանքների մասին հաղորդում տվեց Ռ. Թոխմախյանը: Ա. Արամյանի և Ն. Սագանելիւսի (Թրիլիսի) զեկուցումները նվիրված էին հնչույթների րաշխական վերլուծութեանը և րացահայտում էին արդի հայերէնում հնչույթների զուգորդելիութեան հնարավորութիւնները: Վ. Կարապետյանը (Լենինգրադ) հաղորդում տվեց հայերէնի հայական րադաձայների տարբերակիչ հատկանիշների փորձառական հետազոտութեան արդուներն մասին: Հնչույթաբանութեան և զրարանութեան կիրառական րնագավառներից մեկին՝ սղագրութեան խնդիրներին էր վերաբերում Ս. Ստոյանովի, Վ. Ցվետկովի, է. Սելյանի (Բուլղարիա) ներկայացրած համատեղ զեկուցումը, որտեղ քննութեան էին առնվում հայերէն

ձեռագիր և մեքենագիր սղագրութեան համակարգերի մշակման լեզվաբանական խնդիրները:

Ժամանակակից հայերէնի բառակազմութեան հարցերը՝ կապված տերմինաշինութեան արդիական խնդիրների հետ, քննարկվեցին Ս. Գ. Արահամյանի զեկուցման մէջ: Հեղինակը կանգ առավ տերմինաշինութեան տեսական ու զործնական սկզբունքների մշակման, տերմինների նորմալորման, նրանց ստեղծման տարբեր ուղիներին ու հնարավորությունների լուսաբանման վրա: Անվանագիտական (օնոմաստիկական) հետազոտությունների րնագավառին էր վերաբերում Ն. Ավետիսյանի սշակական ազգանունների ընդհանուր բնութագիրը զեկուցումը: Ներկայացնելով հայկական ազգանունների ծագման ու զարգացման համառոտ պատմությունը, զեկուցողը րացահայտեց նրանց կառուցվածքի առանձնահատկութիւնները՝ հատկապիս ուշագրութիւնի զարձակումը ազգանունական հիմքերի տարբեր տիպերի զասակարգմանը: Հայերէնի զարձակածարանութեան քննութեանն էին նվիրված Մ. Խաւմոյանի «Ժամանակակից զրական հայերէնի զարձակածքների կառուցվածքային տիպաբանութեանը» և Խ. Բաղիկյանի «Փերականական կարգերի իմաստադատիչ զերր ժամանակակից հայերէնի զարձակածարանական միավորներում» զեկուցումները:

Հայերէնի ձեռաբանական կառուցվածքի կարգիւր խնդիրներից մեկին՝ հոլովների համակարգի քննութեանն էր նվիրված Ժ. Պ. Մահի (Ֆրանսիա) հետաքրքրական զեկուցումը, որտեղ հեղինակը, տարբերակելով զործառական և ու զուծառական հոլովներ և զիտտրկելով հոլովականի բոլոր ձեւայթների կիրառութիւնը, հանգում է այն եղրակացութեան, որ հայերէնի հոլովական համակարգում հոգը ստանում է սեռական և տրական հոլովները տարբերակող նշույթի արժեքը: Խոնարհման համակարգի համար կական նշանակութիւն ունեցող՝ ժամանակի քերականական կարգի նկարագրութեան և ժամանակային ձեւերի տերմինային նշանակումների հարցը քննվեց Հ. Բարսեղյանի զեկուցման մէջ: Հարացուցային ձեւերի ձեական (արտահայտչական) և իմաստային (րովանգական) վերլուծութեան հիման վրա զեկուցողը սահմանեց ժամանակային ձեւերի հակադրութիւնները և նրանց փոխհարաբերութիւնը՝ ձգտելով զրանք անվանող տերմինները ննթարկել միասնական իմաստային սկզբունքին: Խոնարհման համակարգում հարակատար ժամանակների տեղի, մուս ժամանակաձեւերի հետ ունեցած նրանց հարաբերակցութեան բնույթի խնդրին անզրադարձակ Ն. Կոլինցանը (Լենինգրադ) ժամանակակից հայերէնի շարա-

Հյուսության հարցերը քննվեցին Ռ. Ուոուտյանի և Ն. Մելիքյանի զեկուցումներում: Առաջինը բայական բառակապակցությունների կառուցվածքային առանձնահատկությունները քննելիս հանգում է այն մտքին, որ նախադասության անդամների ավանդական կաղապարը որոշ սահմանափակումներ ունի, և փորձում է կիրառել ավելի լայն հնարավորություններ ունեցող լեզվաբանական կաղապարներ: Ն. Մելիքյանը արդի հայերենի տարբեր գործառական ոճերի (գիտություն լեզու, լափածո խոսք, խոսակցական լեզու) լեզվաբանության հիման վրա սահմանում է պարզ նախադասության շարադասության հիմնական գծերը՝ հատուկ ուղադրություն դարձնելով առկայական տրոհման գործոնին, ինչպես նաև տեքստի բնույթին: Տեքստի լեզվաբանության դիրքերից Բ. Ղազարյանը ներկայացրեց հայերենի պարբերության մեջ նախընթաց անդամի ձևավորման տարբեր տիպերը, նախադասությունների միջև իմաստային ու ձևական կապերի բնույթը:

Լավեցին նաև ընդհանուր տեսական-մեթոդաբանական և տեղեկատու բնույթի զեկուցումներ: Վ. Մ. Գրիգորյանի զեկուցման մեջ առաջադրվում էր լեզվի կառուցվածքահամակարգային միասնության համարժեք նկարագրության պահանջը, որի համաձայն լեզուն պետք է նկարա-

գրվի ինքնատիպության և տիպաբանական յուրահատկությունների խիստ հաշվառումով:

Ա. Սուքիասյանը գիտաժողովին ծանոթացրեց ժամանակակից հայ բառարանագրության նվաճումներին, վերջին տասնամյակներում ստեղծված բազմաբնույթ բառարանների արժանիքներին և սովետահայ բառարանագիրների առջև կանգնած կարևոր խնդիրներին:

Համառոտ կերպով բնութագրելով երևանում կայացած հայերենագիտական միջազգային գիտաժողովի նշանակությունը՝ կարելի է ասել, որ այն ամփոփեց վերջին տարիներին հայերենագիտության ասպարեզում տարվող աշխատանքների արդյունքները, ականհայտ դարձրեց այն փաստը, որ մեծ շափով աճել է ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների գիտական հետաքրքրությունը հայերենի նկատմամբ, բացահայտեց հայագիտության հետագա առաջընթացի հեռանկարները, ցույց տվեց, որ ներկայումս հայոց լեզուն ուսումնագիրվում է իր ժամանակագրական, տարածական ու գործառական տարբերակների ամբողջությամբ՝ լեզվաբանական տարբեր գիտական գծերի և ուղղությունների հայեցակետից:

Լ. Ս. ՀՈՎՍԵԳՅԱՆ

ԲՐՈՆՁԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԳԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊՐՈԳՐԵՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆՔԿԱՆ ԳԻՏԱԿՈՂՈՎԸ

1982 թ. հոկտեմբերի 20—24-ը երևանում կայացավ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի մշակութային պրոգրեսին նվիրված համամիութենական ամսագրիում, որը կազմակերպել էին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտը, ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և արքայազնության ինստիտուտը: Սիմպոզիումը ներկայացավ իր ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին: Մասնակիցներին ուղղված ողջույնի խոսք ասաց կազմակերպիչ նախագահ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը:

Սիմպոզիումի առաջին նիստը նվիրված էր պատմական դարաշրջանի ու մշակութային պրոգրեսի խնդիրներին: Վ. Մ. Մառտիր (Լենինգրադ) իր «Մշակութային պրոգրեսը վաղ մետաղի դարաշրջանում» զեկուցման մեջ անդրադարձավ հասարակության պրոգրեսիվ դարգացմանը, որը կապված է արտադրողական ուժերի աճի հետ: առաջին հերթին այն ժամանակ, երբ ինքը պրոգրեսը ամբողջությամբ վերցրած գիտ-

վում է սրպես տիպ և դարգացման ուղղություն, նվաղ կատարյալից՝ դեպի առավել կատարյալը: Վաղ մետաղի ժամանակաշրջանում դիտվող առաջադիմության հիմքում նա տեսնում է այդ ժամանակաշրջանի էներգիայի նոր աղբյուրի՝ կենդանիների քարշույ ուժի լայն օգտագործումը, արտադրողականության բարձրացումը՝ կապված մետաղագործության առաջացման հետ: Որպես վաղ մետաղի ժամանակաշրջանի մշակութային առաջադիմության կարևորագույն գիծ նա նշեց հաղորդակցության, ինֆորմացիայի տարածման, փոխանակային առևտրի, ինչպես և նշանային հաղորդակցման ձևի դարգացման փաստը:

Գ. Ի. Արեշյանի (երևան) զեկուցումը նվիրված էր մշակութային և սոցիալական կազմի դարգացման հարաբերական անկախության հարցին՝ ըստ Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի բրոնզեդարյան նյութերի:

Մշակութային պրոգրեսի որոշ առանձնահատկությունների մասին էր նաև Մ. Գ. Հաջինի (Մախաչկալա) զեկուցումը, որտեղ, Հյուսիսային Գովկասի հնագիտական նյութերի ուսումնա-